

լայ: Արժրունիի պատերազմի շարքաւորման այս նկարագրութիւնը մեծարժէք է հին հայ ռազմավարութեան համար: Ապումուէէ իր գինուորները քառաթեւ խաչի մը նման զասաւորուած, որով կրնար պաշտպանել բոլոր իր գինուորներուն թիկունքը, կը մխրճուէր արաբացոց բանակին մէջ եւ իրենց անդիմադրելի թափով եւ անխոցելի շարուածքով Բուղայի ուժերը պարտութեան կը մատնէր:

Պատերազմը երկար կը շարունակուի: «Յերկարեցաւ գործ պատերազմաց սոցա իրրեւ մօտ ի լնուլ ամի միոյ. եւ ոչ ի միում ճակատու դարձոյց Ապումուէէ զերեսս իւր յերեսաց Բուխայի. եւ որպէս պատմի՝ եղև թիւ պատերազմաց նոցա ԻԸ (28) անգամ, եւ հարան զօրքն արքունի յայսքան հանդէսս եւ ի կոիւ» (էջ 299):

Այսպէս տարի մը ամբողջ քսանեւութ պատերազմներով Ապումուէէ մարտնչեցաւ Բուղայի դէմ: «Յայնժամ իրրեւ զիտացին երկոքին կողմանքն, եթէ ոչ գոյ գտանել զելս իրացն եւ տալ խաղաղութիւն՝ ապա հաճեցան եւ հաւանեցան գրել առ թագաւորն (Սալիֆան). զի ասաց զօրավարն Աղուանից, եթէ մի կարծիցէ որ զիս ապստամբ գոլ ի թագաւորէն (խալիֆայէն) եւ վասն այնր հարկանել զգօրսդ Ասորեստանի. այլ կուտեաց եղ ի վերայ Բուխայի զապստամբութեան վնասն եւ զհարուածս զօրացն, զոր գրեաց իսկ եւ ծանոյց արքայի (խալիֆային). իսկ եթէ եկեացէ առ իս զիր յարքունուստ, կնքեալ մատանեաւ արքայի, եւ իցէ գրեալ ի նմա հրաման՝ զալ ինձ առ քեզ կամ երթալ յարքունիսն՝ ոչ ելից արտաքոյ հրամանացն նորա: Բայց եթէ այդ այդպէս ոչ եղիցի, որպէս ասացի՝ աւելի եւս տեսցես քան զոր տեսեր, սուր եւ պատերազմ»:

«Ապա երկոքին նոքա ղեսպանս արձակեցին առ թագաւորն ի հաւատարիմ արանց... եւ գրեցին եւ ծանուցին արքայի՝ զոր ինչ գործեցին եւ որպէս հարան զօրքն արքունի: Նստան երկոքին կողմանքն պահել զպահպանութիւն իւրեանց մեծաւ ըզ-

գուշութեամբ, եւ ետուն անսալ միմեանց՝ ոչ ելանել ի պատերազմ, մինչև եկեացն հրեշտակքն յարքայէ (խալիֆայէ), զոր տաքեցինն: Բայց տուաւ յաղթութիւնն այն մեծ ի ձեռն զօրավարին Ապումուէէի...»:

«Եւ մինչ նոքա կային մնային հրաման ինչ ընդունել յարքունուստ՝ զարձան հրեշտակքն եւ եկին փութանակի, եւ բերին թուղթ յարքայէ առ Ապումուէէ՝ զալ ի հնազանդութիւն նոցա եւ երթալ առ Բուխայ. եւ էր գրեալ ի նմա թողութիւն վնասուցն եւ հարուածոցն զօրացն եւ բազում աւարացն, եւ երդումն ի հաստատութիւն ասացելոցն, եւ պարգևս ի պատուական եւ մեծագնի հանդերձից, եւ սաղաւարտ ծաղկեայ եւ սուսեր. միայն զի եկեացէ ի բան արքունի եւ մի ելցէ արտաքոյ կամաց թագաւորին (խալիֆային). եւ գրեալ էր առ Բուխայ, զի մի ինչ չարիս խորհիցի կամ գործիցէ առնն այնմիկ, այլ տացէ տանել զնա առ թագաւորն մեծաւ պատուով եւ զգուշութեամբ»:

«Իսկ իրրեւ ընթերցաւ զօրավարն Աղուանից (Ապումուէէ) զթուղթ թագաւորին՝ փութացաւ էջ ի լեռնէ անտի եւ եկն եկաց առաջի Բուխայի. եւ մինչև եւ հասեալ առ զօրավարն՝ եհան ընդ առաջ նորա գունդս գունդս վառեալ գինու եւ ընտրեալ երկվարօք, եւ ետ տանել ընդ առաջ նորա նժոյզս մեծազարդս եւ երեւելիս, եւ երգեցիկս եւ զովասացս եւ բազում դործիս երաժշտականս առաջի եւ զկնի՝ մինչև եւ հմուտ ի բանակ նոցա: Եւ ոչինչ ամենեւին զչարացաւ ընդ նմա Բուխայ եւ ոչ յիշեաց զգործսն զոր գործեաց, եւ ոչ տրամեցոյց զերեսս իւր. այլ ընկալաւ զնա սիրով խաղաղութեան եւ մեծաշուք պատուով եւ պարգևօք ըստ հրամանի թագաւորին: Իսկ յետ անցանելոյ աւուրց ինչ՝ ետ տանել զնա առ թագաւորն, եւ ընդ նրմա գունդս գինուորաց վառելոց եւ ընտիր այրուձիոց: Եւ երթայր աներկիւղ համարձակութեամբ, քաջալերեալ ի միտս եւ ի խորհուրդս իւր ըստ պնդութեան արու-